ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԿ-24/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
8	«Հավատարմության համար» մեդալն իրենից ներկայացնում է 36 մմ տրամագծով միակողմ պատկերով շրջան՝ վրադիր էլեմենտներով: Պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Մեդալի հիմնական գույնն է «արծաթագույնը»: Մեդալի դիմային երեսի վրա տեղակայված է ոճավորված ռելիեֆային ութանիստ արծաթագույն աստղ: Աստղն իրենից ներկայացնում է երկու հավասարակողմ խաչերի միասնություն, որի արտագծած շրջանագծի տրամագիծը՝ 45 մմ է: Աստղի կենտրոնում առկա է 30 մմ տրամագծով շրջան, որի կենտրոնում տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը, որը եզերված է Հայաստանի Հանրապետության եռագույնը խորհրդանշող կարմիր, կապույտ, նարնջագույն էմալներով: Խորհրդանիշի վերևում գրված են «ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» բառերը, իսկ ներքևում առկա է ռելիեֆային պսակ, որի ձախ թևը դափնե ճյուղ է, իսկ աջը՝ կաղնու ճյուղ: Մեդալի դարձերեսին՝ ներքևի հատվածում տեղակայված է մեդալի հերթական համարը: Մեդալն ունի հնգանիստ կախիչ՝ 39x27x39x24x24 չափերի, որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե բաց մոխրագույն ժապավենով: Ժապավենը եզրագծված է նարնջագույնով՝ 2 մմ լայնությամբ: Ժապավենի ոսկեգույն եզրագծերին հետևում են մուգ կապույտ գույնի զոլակները՝ 6 մմ լայնությամբ: Ապրանքի նմուշը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԿ-24/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
8	